

«Ինքնութեան խճանկար»,  
Մատենախօսութեամբ  
Հալէպի Մօտ ՀՀ Գլխաւոր Հիւպատոս  
Արեգ Հովհաննիսեանի

Այսօր մենք հաճոյքն ու պատիւն ունենք վայելելու Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի անդամ, Վենետիկի համալսարանի հայագիտութեան ամպիոնի վարիչ, Դոկտ. Պրոֆ. Հայր Լեւոն Զեքիեանի ներկայութիւնը, վաստակաշատ մտաւորականի «Ինքնութեան խճանկար» գրքի լոյս ընծայման ուրախ առիթով:

Ծանօթանալով Հայր Լեւոն Զեքիեանի «Ինքնութեան Խճանկար» անչափ արժէքաւոր եւ այժմեական, արդիական գրքին, մենք որոշեցինք, որ վերջինիս շնորհահանդէսը պէտք է կազմակերպի Հալէպում Հայաստանի գլխաւոր հիւպատոսութիւնը՝ ի նշան սփիւռքահայ նշանաւոր գիտնական, անխոնջ մտաւորական Պրոֆ. Հայր Լեւոն Զեքիեանի հայապահպանմանն ուղղուած երկարամեայ գործունէութեան եւ գիտական աշխատանքի բարձր գնահատանքի:

Պրոֆ. Զեքիեանի տարբեր տրիւններին եւ տարբեր տեղերում ընթերցած դասախօսութիւնները մէկ գրքում հաւաքել, խմբագրել եւ զետեղել է հալէպահայերին քաջաձանօթ մտաւորական, ուսուցչուհի եւ լրագրող Սալբի Գասպարեանը, որի մանրակրկիտ եւ հետեւողական աշխատանքի արդիւնքում էլ լոյս տեսաւ սոյն ժողովածուն:

Պրոֆ. Զեքիեանի հիմնական մտահոգութիւններից է նաեւ՝ լեզուի խնդիրը որպէս ինքնութեան գիտակցման կարեւորագոյն գործօն: Խոր վերլուծութիւններով արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուների ծագման պատմութեան եւ պատճառների, հեղինակը կոչ է անում ամէն գնով պահպանել եւ զարգացնել մայրենի լեզուի երկու հիմնական ճիւղերը միեւնոյն ժամանակ, բարեփոխումների միջոցով, ձգտելով մերձեցնել դրանք միմիանց:

Այսպիսով, գիրքը ուղղակի հանդիսանում է խորաթափանց մտորումների, երբեմն ցաւի եւ տագնապի, երբեմն էլ հպարտութեան, մեր անցեալի եւ ներկայի նուաճումների, ազգային արժէքների վերլուծութիւնների մի ինքնատիպ համադրում, այն տոգորուած է սեփական ինքնութեան գիտակցման բարձր գնահատանքով, այն վերլուծում եւ ընթերցողին մատուցում է այդ ինքնութեանգիտակցման անհրաժեշտութիւնն եւ արժէքը, ինչպէս նաեւ ուղիներ է մատնանշում դրան հասնելու համար:

«Ինքնութեան խճանկար»ը չի յաւակնում հանդիսանալ հայկական սփիւռքի կամ հայ ժողովրդի նորագոյն պատմութեան դասագիրքը, կամ էլ դոգմատիկ հարցադրումների ժողովածու: Ընդհակառակը, ուսումնասիրելով ներկայ հայ իրականութիւնը, շողկապելով այն մեր պատմութեան եւ հոգեբանութեան հետ, հեղինակը քաջ գիտակցում է, որ ազգային ինքնութիւնը ապրում է դիալեկտիկ զարգացում եւ սերտօրէն պէտք չէ դառնայ մեր «հիւանդութիւնը» ինքներս մեզանից հեռակայող եւ մտազարող: Այն պէտք է լինի մեր վերածննդի, գոյատեւման, զարգացման եւ բարգաւաճման վճռականութիւնն ամրացնող մի հզօր մղիչ գործօն:

Միեւնոյն ժամանակ, հետաքրքրութիւն են ներկայացնում Պրոֆ. Զեքիեանի մտածումները Հայ Դատի վերաբերեալ, որի համար ամենակարեւոր փաստարկներն են ըստ ոմանց Սեւրի դաշնագիրը, իբրեւ փոխ հատուցման փորձ մը հայոցդէմ գործուած

ոճրին եւ մի ամբողջ ժողովուրդ իր հողից արմատախիլ անելուն ուղղուած թրքական պետութեան գործողութիւնները: Հենց սեփական հողից արմատախիլ անելու Հայոց Յեղասպանութեան առանձնայատկութիւնը ի տարբերութիւն Հոլոքոստի, որն իրականացուեց այլ վայրերում եւ չի պարունակում հողի գաղափար:

«Ինքնութեան Խճանկար» գրքում զգալի տեղ են գրաւում Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւնները, իրար նկատմամբ երկուստեք ունեցած իրաւունքներն ու պարտականութիւնները եւ այլ հրատապ խնդիրներ: Աբդրադառնալով ՀՀ քաղաքացիութեան հարցին, Պրոֆ. Ջէքիեան ամփոսանք յայտնելով հանդերձ, որ նորանկախ Հայաստանը այլեւայլ պատճառներով հնարաւորութիւն չունեցաւ սփիւռքահայերին անմիջապէս շնորհելու քաղաքացիութիւն, նշում է, որ հայ ինքնութեան պահպանման համար անհրաժեշտ պայման չէ քաղաքացիութիւն ունենալը, չէ՞ որ հայ ինքնութիւնը պահպանուել է նոյնիսկ 600 տարի պետականութիւն չունենալու պարագայում:

Հիմնելով եկեղեցիներ, սկումբներ, միութիւններ, միեւնոյն ժամանակ կարողացել են յարմարուել իրենց հիւրընկալ բարքերին, ազնուօրէն ծառայել են պետութեանը, հանդիսացել են օրինաւոր քաղաքացիներ միեւնոյն ժամանակ բարձր գնահատելով իրենց հիւրընկալող պետութիւնների եւ ժողովուրդների արժէքային համակարգը:

Դրա վառ օրինակն է Սուրիայի հայութիւնը, որը բազմապիսի եւ բազմագոյն ազգային կեանք վարելով հանդերձ, հանդիսանում է իր սուրիական հայրենիքի կրքոտ ջատագովն ու ազնիւ քաղաքացին եւ շարունակում է երախտիքի ազգացումներ տաճել իրեն հիւրընկալած ժողովրդին հանդէպ:

Պրոֆ. Ջէքիեանը անդրադառնում է Սփիւռքի տարբեր գաղթօճախների պատմութեան, դրանց առանձնայատկութիւններին, այն ազդեցութիւններին որոնց ենթարկւում են տարբեր գաղթօճախներ առնչուելով տուեալ երկրի մշակոյթին, բարքերին, այն մարտահրաւերներին, որոնց դիմակայում են տարբեր գաղութներ:

Անդրադառնալով Սփիւռքի գոյացման հիմնական դրդապատճառներին, Մեծ Եղեռնին, Պրոֆեսորն ընդգծում է, որ այն հանդիսանում է մեր գիտակցութենէն եւ ինքնութեան բնորոշման անբաժանելի մասնիկը, որ կայ եւ պիտի մնայ մեր մտքի եւ հոգու մէջ: Սակայն սա նշում է, որ Եղեռնի հարցադրումները ստիպում են ընթերցողին խորել այդ հասկացողութիւնների մասին, յաճախ վերագնահատելով նախկինում ունեցած պատկերացումները, նորովի ընկալելով կարծես թէ վաղուցուանից յստակ ու հասկնալի այդ հասկացողութիւնների ծագումը, ներկան եւ փոխ յարաբերութիւնները:

Հեղինակը յատկապէս կարեւորում է քրիստոնէութեան դերը մեր ժողովրդի կեանքում, ընդգծելով, որ ժամանակին, երբ հայ ժողովրդին սպառնում էր կործանման վտանգը, քրիստոնէութիւնը, միանալով հայ ինքնութեանը, կատարեց փրկարար դեր:

Պրոֆեսոր Ջէքիեանը խորապէս ուսումնասիրել է ինչպէս առանձին գաղթօճախների, այնպէս էլ Սփիւռքի որպէս ընդհանրական հասկացողութեան պատմութիւնը եւ անում է մի շատ կարեւոր եզրայանգում, որի հետ անկարելի է չհամաձայնուել, դա այն է, որ Սփիւռքը (հակառակ իր գոյացման ողբերգական պատճառների) մեր այսօրուան անգնահատելի հարստութիւնն է, որի գոյութիւնը արդէն կարող է շարժել շատ շատերի նախանձը, այն աստիճան, որ նոյնիսկ եթէ Սփիւռքը չունենայինք, արժէր որ այսօր ստեղծէինք:

Աշխարհի տարբեր երկրներում հանգրուան գտած հայութեան գոյատեւումը, հեղինակը պայմանաւորում է նրանով, որ հայերը, իրենց արմատներին կառչած մնալով

հանդերձ, կազմակերպելով իրնց ազգային կեանքը, առաջնորդում են հեղինակին հայրենիքի եւ Սփիւռքի առջեւ ծառայող մարտահրաւերներին արծարծման ընթացքում:

Հայ ինքնութեան վերլուծութիւնը հեղինակն իրականացնում է հեռաւոր անցեալի եւ ներկայի վարպետօրէն համադրման շնորհիւ, եւ ընթերցողը մերթ յայտնւում է մեր ժողովրդի պատմութեան համար ամենակարեւոր իրադարձութիւնների կիզակէտում, հաղորդակցւում է մեր պատմութեան եւ հոգեւոր ճարտարապետներին հետ, մերթ էլ յայտնւում է նորանկախ Հայաստանում մխրճուելով պետականութեան կերտման, նոր արժէքների ձեւաւորման գործընթացների ծալքերի մէջ:

Մահմանելով հայ ազգի նկարագիրը, Պրոֆեսոր Չէքիեանը նշու է, որ ազգը իր պատմական, բազմադարեան հոլովոյթներով, հողային եւ քաղաքացիական տարածքներն անդրազանցող մի ամբողջութիւն է, որ ներգրաւում է բոլոր նրանց, ովքեր իրենց զգում եւ համարում են այդ ամբողջութեան մասը, իւրաքանչիւրը բերելով իր նպաստը, իր հնարաւորութիւնների չափով եւ ձեւով յանուն այս ամբողջութեան պահպանման, գոյատեւման ու բարգաւաճման:

Չափազանց խորաթափանց եւ հետաքրքրական են հեղինակի մտածումներն ու վերլուծութիւնները, հող, երկիր, ժողովուրդ, ազգ, պետութիւն հասկացողութիւնների վերաբերեալ: Հեղինակը մասնակցել է մի քանի տասնեակ գիտաժողովների, կրթել եւ դաստիարակել է հազարաւոր հայ եւ օտար երիտասարդների: Հայր Լեւոն Չէքիեանը հաղիսանում է բազմաթիւ հրատարակութիւնների, թարգմանութիւնների հեղինակ:

Հարկ է նշել, որ Պրոֆ. Չէքիեանի միջազգային ճանաչման արդիւնքում նրա անունն ու գործունէութիւնը պարբերաբար յիշատակւում են Marquis Who's Who In The World կենսագրական միջազգային բառարանում, ինչպէս նաեւ Baron's Who's Who 2000-ի Եւրոպայի 500 ակնառու գործիչների ցանկում:

Ակադեմիկոս Վլատիմիր Բարխուդարեանը «**Ինքնութեան Խճանկար**» գրքի նախաբանում գրում է Պրոֆ. Չէքիեանի մասին հետեւեալը. «Տեղին է նշել նաեւ այն զօրաւոր հանգամանքը, որ գրքի հեղինակը իր ողջ գործունէութիւնն ուղղել է հայրենիքը եւ Սփիւռքը միասնութեան մէջ տեսնելու նպատակին եւ դրանց հետ առնչուող հարցերը դիտարկել է մէկ ընդհանուր յետախորքում, նշանաբան ունենալով «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» կարգախօսը»:

«**Ինքնութեան Խճանկար**»ը կարդացողը, նոյնիսկ առանց Հայր Լեւոն Չէքիեանին ճանաչնալու, գրքի տողերում անմիջապէս կռահում է այն մեծ կրակը, այն տագնապը եւ այն քաղաքացիական զգացումը, որով բնորոշւում է նրա ներաշխարհը:

Գրքի կազմի ձեւաւորումն իրականացրել է կրկին մեզ բոլորիս ծանօթ Հրազդան Թոքմաճեանը, որ զետեղելով կազմի յաւերժութեան խորհրդանիշը, դրանով իսկ եւս մէկ անգամ ընդգծել է «հայ ինքնութեան» յաւերժական բնոյթը: Անհրաժեշտ է նաեւ բարձր գնահատել լիբանանահայ բարերարներ Արմէն եւ Միմի Յարութիւնեանների դերը սոյն ժողովածուի հրատարակութեան հարցում: Նրանց մեկենասանութեամբ է, որ այսօր մենք առիթն ունենենք ծանօթանալու Պրոֆեսոր Չէքիեանի նախկինում անտիպ դասախօսութիւններին:

Հսկայական է Պրոֆ. Չէքիեանի գիտական, մանկավարժական վաստակը, նա առնչւում է ինչպէս ժամանակի եւ տեղային պայմանների այնպէս էլ համաշխարհային կլոպալ զրգացումների հետ: Այսքանը Հայր Լեւոն Չէքիեանի «**Ինքնութեան Խճանկար**» գրքի մասին:

Կրկին անգամ շնորհաւորում եմ մեծարգոյ Պրոֆ. Հայր Լեւոն Չէքիեանին եւ ընթերցասէր հասարակութեանը «**Ինքնութեան Խճանկար**» գրքի լոյս ընծայման առիթով:

**Ծանոթ.**

- Տիար Արեգ Յովհաննիսեան այժմ ՀՀ դեսպանն է Լիբանանի մէջ:
- Վերոյիշեալ մատենախօսութիւնը տեղի ունեցած է Հալէպ, Հ. Հ. Հալէպի Հիւպատոսութեան այս առթիւ կազմակերպած շնորհահանդէսին, որ նախընտրաբար կը ներկայացուի այստեղ:

12 Յունիս, 2001